


ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք. Եղեգնաձոր

Տարածաշրջանները՝

Վայք,

Եղեգնաձոր

Քաղաքները՝

Եղեգնաձոր,

Վայք,

Ջերմուկ

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8%
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2013թ. տարեվերջին	51.7 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	18.2 հազ. մարդ
գյուղական	33.5 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2012թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	190 340.8 հա
այդ թվում՝ վարելահողեր	16 199.5 հա

ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

ՀՀ Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատենշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների

միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

ՀՀ Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կամ 13 240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

ՀՀ Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է +41°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35°C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2013թ.-ին **մարզի տնտեսության հիմնական հատվածների** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.0 %,
- գյուղատնտեսություն՝ 2.2 %,
- շինարարություն՝ 1.1 %,
- մանրածախ առևտուր՝ 0.3 %,
- ծառայություններ՝ 0.6 %:

Մարզի **տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5 %-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ <<Ջերմուկ>> հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում ՀՀ-ն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են **ներքին և արտաքին զբոսաշրջության** զարգացման մեծ հեռանկարները:

Շեղանածոր քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 7.9 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

Շեղանածոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են **արդյունաբերությունն ու շինարարությունը**:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի գինու, էլեկտրասար-

քավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:

Վայք քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 5.8 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:


Վայք քաղաքի տնտեսության հիմնական ճյուղն **արդյունաբերությունն է**: Հիմնականում զարգացած են հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:

Ջերմուկ քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 4.5 հազ. բնակիչ) գտնվում է 2 070 մ բարձությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններ են. <<Ջերմուկ>>-ը, <<Նոր կյանք>>-ը, <<Գլաձոր>> -ը, <<Աղաջանյանի անվ. առողջարան>>-ը և <<Արարատ>>-ը:

Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

Ջերմուկ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, <<**Ջերմուկ**>> **հանքային ջրի**, արտադրությունն է:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ
 տղամարդ տարիք կին



ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	210	265	229	227	231
այդ թվում՝					
խանութներ	120	172	161	159	167
կրպակներ	59	59	46	46	43
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	-	-	-	-
առևտրի այլ օբյեկտներ	29	33	21	21	20

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Պետական նախադպրոցական	17	17	17	18	18
Պետական հանրակրթական	51	51	51	50	50
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատահական ստեղծագործական կենտրոններ	7	8	7	7	7
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	1	1	1	1	1
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	1	2	2
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	-

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր	7 852
Վայք	ք. Վայք	5 818
Զերմուկ	ք. Զերմուկ	5 469
	ք. Կեչուտ	

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ագարակաձոր		1 420
2	Ագատեկ		568
3	Աղավնաձոր		2 067
4	Աղնջաձոր		444
5	Արենի	•Արենի •Ամաղու	1 928

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
6	Արին		269
7	Արտաբույնք		1 141
8	Արտավան		282
9	Արփի		1 272
10	Բարձրունի		459
11	Գետափ		2 407
12	Գյաձոր		2 755
13	Գնդեվազ		1 004
14	Գնիշիկ	•Գնիշիկ •Մոզրով	192
15	Գողթանիկ		226
16	Գոմք	•Գոմք •Ախտա •Կապույտ	233
17	Ելփին		1 356
18	Եղեգիս		468
19	Զատիթափ	•Զատիթափ •Հորաղիս	1 547
20	Զեղեա		184
21	Թառայթումբ		535
22	Խաչիկ		991
23	Խնձորուտ		532
24	Կարմրաշեն		296
25	Հերիեր		888
26	Հերմոն	• Հերմոն •Արատես •Կալասար	212
27	Հորբատեղ		256
28	Հորս		287
29	Մալիշկա		5 395
30	Մարտիրոս		687
31	Նոր Ազնաբերդ		166
32	Շատին		2 040
33	Չիվա		1 017
34	Ռինդ		1 495
35	Սալլի		240
36	Սարավան	•Սարավան •Ուրդեձոր	284
37	Սերս		202
38	Վարդահովիտ	•Վարդահովիտ •Գետիկվանք •Սևաժայռ	229
39	Վերնաշեն		1 312
40	Փոռ		128
41	Քարազլուխ		868

**ՀՀ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՑՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2013թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղա- մարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 090	4 910
Ծնվածներ, մարդ	126	58	68
Մահացածներ, մարդ	89	44	45
Ամուսնություններ	69	X	X
Ամուսնալուծություններ	14	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	44.6	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	177	88	89
հանրակրթական	1 279	602	677
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	200	132	68
նախնական մասնագիտական (արհեստագործական)	25	7	18
միջին մասնագիտական	56	30	26
բարձրագույն մասնագիտական	31	17	14
Առողջապահության ոլորտ՝			
Հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	35 015
Մարզիկներ, մարդ	403	79	324
Զբաղվածներ, մարդ	5 153	2 619	2 534
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	203	153	50
բժիշկներ	20
միջին բուժանձնակազմ	51
Գործազուրկներ, մարդ	640	365	275
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 995
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	434	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	32 457
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	194
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	33	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	21	X	X
միջին ծանրության	8	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	-	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են:

